ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 21 փետրվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Արտուշ Գուլքանյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Արտուշ Գուլքանյանը 2011թ. փետրվարի 8-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 120-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 32-րդ հոդվածի 1-ին մասի, 18-րդ եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով պարզվեց, որ սույն դիմումն ակնհայտ անհիմն է՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը փորձել է հիմնավորել օրենսդրական ենթադրյալ բացի առկայությամբ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-864 որոշմամբ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր

մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքի առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է նաեւ, որ «…օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ վիճարկվող դրույթը չի սահմանում մասնագիտական ունակությունների գնահատման կարգը, ապա գտնում ենք, որ վիճարկվող դրույթն իր բովանդակությամբ սահմանադրաիրավական վեճ չի առաջացնում, քանի որ, եթե նույնիսկ առկա է օրենսդրական բաց, ապա ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումներից՝ վիճարկվող դրույթը չի կարող սահմանադրական դատարանում գործի քննության առարկա դառնալ:

Հարկ է նշել, որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ նորմի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն, դիմողը փորձել է դատական ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականության խնդրին: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են

մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով ՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Արփուշ Գուլքանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝

21 փետրվարի 2011 թվական
ՍԴԴԿՈ/1-3